

րուն : Իւ այն ատեն խարխափելով երա-
նութե գունէն զուրսկ' ելլէին մի առ մի, և
կ'ինկնային արեան ծարաւի զազանաց
մէջ տեղն' գանձապետք, վէզիրք, ներ-
քինիք, մտերիւք, զօրավարք . և հետ-
զհետէ կ'ինկնային պատառոտեալ 'ի հա-
րիւր սուսերաց և տգեղացեալ 'ի հա-
րիւր ոտից : Այսպէս Մուրատ Գ կը նե-
տէր իր սիրելի բազէպանը զՄէհէմէտ,
զոր իրեն աչաց տակը յօշ յօշ զիշա-
տեցին . այսպէս Մէհէմէտ Գ կը նետէր
զԳրզլար-աղասը Օսման և զԿլխաւորն
սպիտակ ներքինեաց զԽազնէֆէր, և
ստիպուած էր սղլունելու զինուորու-
թիւնը արինաթաթաւ երկու դիա-

կանց զիմաց . այսպէս Մուրատ Գ կը
նետէր հեծեծելով զՀաֆիզ մեծ վե-
զիրն, որուն լանջը և իրանը կը պատա-
ռէին եօթնևտասն դաշայնք . այսպէս
Սէլիմ կը նետէր իր ասնինն բոլոր զը-
լուխներն . և մինչդեռ անիծելով, ճրն-
չեալ 'ի ցաւոյ և յամօթոյ փատիշահը
կը մոնէին իրենց սենեակներն, ապրու-
տամբից հազար ջահերն կ'ընթանային
Ստամբուլի ճամբաները, լուսաւորելով
սրարբեալ ամբոխին մէջ յաղթանա-
կաւ գետնաւքարը տարուած զիականց
մնացուածը :

Եր շարունակուի .

Բաւանայի չրակցքին աշխատու-
րիւնքը . — Նոր Օրլէանի Տիւնօքիէդ
լրագիրն, իրեն թղթակիցներուն մէ-
կուն գրուածը հրատարակեր է, որ խօ-
սակցութիւն մ'ունենցեր է ընդ Տէ Գոս-
դայի, յԱսրինվալէ, պարանոցին բաց-
ման համար Լեսսերսի ծրագրաց նիւ-
թոյն վրայ : Ըստ այսր գրուածոյ, գրե-
թէ երեքհարիւր մարդ կան՝ որ եռան-
կիւննաչափութեան և ծրագիրներ յօրի-
նելու պարզած են . ուրիշ աշխատութիւն
չեն ըներ : Վերպրիւկ, որ Ռեզլիւի հե-
ռաւորութեան ատեն առժամանակեայ
տեսչի պաշտօնը կը կատարէ, նորոգ 'ի
Բարիզ կանչուելով, կ'ըսէ, որ ըստ իրեն
գիտութեան՝ պեղման աշխատութեանց
ձեռք պիտի չզարնուի 1882 դեկտեմ-
բեր ամսէն առաջ :

Ընկերութիւնը գնեց Բանամայի կրակն
Օդէլը, 950,000 Ֆր. գնով : Այս շինուա-
ծը . որ քաղաքին գեղեցկագոյնն է, պի-
տի փոխոյսուի, հօն ընդհանուր մատա-
կարարութեան պաշտօնարանըը հաս-
տատելու համար : Ասրինվալի և Բանա-
մայի ընակիչք կը մաղթեն որ յաջողու-
թեամբ իրենց նախագուշակութիւնը
ստուգուի . իրենք կը գովեն թէ ծրա-
գիրք լաւ շինուած և գործադրելիք են,
և յայտնապէս բարի վերջ պիտի ունե-
նան : Քանի որ սկսուած են չափման
աշխատութիւնքը, 'ի պարանոցին կա-

լուածոց արժէքը չորս կամ լաւ ևս հինգ
անգամ կրկնապատկեր է : ՅԱսրինվալ
և 'ի Բանամայ ժողովուրդը կ'աճի արա-
գապէս, և շինութեան աշխատութիւն-
քըն այս երկու քաղաքիս մէջ շատ գոր-
ծունեայ են . մասնաւորապէս Բանաման
է որ օգուտ կը քաղէ իրաց այս յառա-
ջագիմութենէն :

Ընկերութեան մէջ գործածած բոլոր
մարդիկն դաղդիացիք են : Տէ Գոսդայի
մեկնելէն քանի մ'օր առաջ, ընկերու-
թիւնը իրենց ռոճիկը 25 սէնդ (1 Ֆր. 25)
նուազեցուցեր էր, և այս կերպով մ'ի
գործոյ ետ կեցուցեր էր զիրենք . քանի
մ'օր աշխատութիւնքը դադրեցան, և
շատ գործակատարք հաստատապէս
մեկնեցան : Անոնցմէ ոմանք Տէ Գոսդայի
հետ մեկնեցան նոյն նաւով 'ի Միա-
ցեալ-Նահանգս : Ուրիշ կողմանէ երկա-
րատե 'ի գործոյ ետ կենալ մը կարելի
է . վասն զի ընկերութիւններ չկան զա-
նօնք յոտին բռնելու, և գործաւորք ըս-
տիպուած են գործերնին ձեռք առնուլ,
թէ որ անօթութենէ չեն ուզեր մեռ-
նիլ : Առաջ տողար մը կը հատուցանէին,
զարդիս անոնք 75 սէնդէն (3 Ֆր. 75)
աւելի պիտի չունենան :

Ի հաւատարիմ և մանաւանդ անշա-
հախնդիր աղիւրէ առած ապացուցից
նայելով, գործերը շատ այնպէս ուրա-
խացուցիչ կերպարանաց մը տակ չեն :